ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մայր հայրենիքում մեր մտավորականության և գրականագետների ուշադրության կենտրոնում է եղել Ներսես Շնորհալու կյանքն ու գործունեությունը և մատենագրական բազմաժանր վաստակը:

Մեր հայրենական մամուլում բազում ուսումնասիրություններ և մենագրություններ են լույս տեսել՝ նվիրված Շնորհալու կյանքին ու գործունեությանը, ժամանակաշրջանին, նրա արձակ և չափածո բազմաժանր ստեղծագործությանը, լեզվին, շարականագրական, երաժշտական հարուստ վաստակին, տաղաչափական արվեստի առանձնահատկություններին և նորարարությանը:

Շնորհալու մասին գրված լուրջ ու արժեքավոր ուսումնասիրություններից են հետևյալները.

1. **Մանուկ Աբեղյան,** «Ներսես Շնորհալի», «Հայոց հին գրականության պատմություն», գիրք երկրորդ, Երևան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1946, էջ 73—130:

Նույնի երկրորդ հրատարակությունը, տես

2. **Մանուկ Աբեղյան,** Երկեր, Դ, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1970, էջ 95—157:

3. **Գրիգոր Ա. Հակոբյան,** «Ներսես Շնորհալի», Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1964, էջ 5—298 (մենագրություն):

4. **Ներսես Շնորհալի,** «Յաղագս երկնի և զարդուց նորա», «Հանելուկներ», «Ողբ Եդեսիոյ», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1968, կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Գր. Ա. Հակոբյան, խմբագիր՝ Լ. Վ. Միրիջանյան, էջ 3—111:

Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ լույս են տեսել հետևյալ հոբելյանական հրատարակությունները.

1. **Ներսես Շնորհալի,** «Ողբ Եդեսիոյ», քննական բնագիր, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ՝ Մանիկ Մկրտչյանի, խմբագիր՝ Փ. Անթաբյան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1973, «Ներսես Շնորհալին և նրա «Ողբ Եդեսիոյ»-ն», ներածական խոսք՝ Պողոս Խաչատրյանի, էջ 5—18, ապա «Ողբ Եդեսիոյ», բնագիր, էջ 19—138, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ, ցանկ ձեռագրերի՝ էջ 141—157:

2. **Նիկողոս Թահմիզյան,** «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1973, 248 էջ. ուսումնասիրություն, բնագրեր, շարականներ, ս. պատարագի և Ժամագրքի երգեր, ծանոթագրություններ, ամփոփում ֆրանսերեն և ռուսերեն, ցանկեր, մասնագիտական եզրերի բառարան (մենագրություն):